ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) հայտարարում է Աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության փորձագետ ներգրավելու համար

Փորձագետը ներգրավվում է Աշխատակազմում տեղական ինքնակառավարման ոլորտի գործառույթներ իրականացնելու նպատակով:

Աշխատանքային պարտականություններն են՝

ա. Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված և Աշխատակազմ առաքված որոշումների ուսումնասիրության և իրավաչափության որոշման աշխատանքների իրականացում,

բ. ավագանու նիստերի կամ հանրային նշանակության այլ միջոցառումների առցանց հեռարձակումների անխափան իրականացում, ինչպես նաև աջակցություն համայնքապետարանների պաշտոնական կայքէջերի մշտական հասանելիության ապահովմանը,

գ. համայնքներում առկա վիճակի վերլուծություն, խնդիրների վերհանում և առաջարկությունների ներկայացում:

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

ՀՀ քաղաքացիություն, բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տարածքային կառավարման բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաև իրավական ակտերի մշակման փորձառություն:

Փորձագետը ներգրավվում է 6 /վեց/ ամիս ժամկետով՝ 2025 թվականի նոյեմբերի 6-ից մինչև 2026 թվականի մայիսի 6-ը:

Աշխատավարձը 221312 /երկու հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր տասներկու/ ՀՀ դրամ:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

* դիմում ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի անունով.

* տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայական(ների), աշխատանքային գրքույկի

(վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

* արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

* մեկ գունավոր լուսանկար 3X4 սմ չափսի,

* անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը

* հայտարարություն՝ նշված սահմանափակումների բացակայության մասին.

- պաշտոնից ազատվել կամ ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու,

- օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու,

- օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու,

- «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու,

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Ընտրությունը կատարվելու է դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով:

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ, կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Աշխատավայրը՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 09:00 – 13:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2025թ. նոյեմբերի 5-ը ներառյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ /ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16, Աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հե կապերի վարչություն, հեռախոս 0312 4-90-00-136/ էլեկտրոնային փոստի հասցեն՝ shirak.andznakazm@mta.gov.am):

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի

գլխավոր քարտուղար Արսեն Աբրահամյանին

.....- ից
դիմողի անուն հայրանուն ազգանունը

.....
դիմողի հեռախոսի համարը

.....
էլեկտրոնային հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ,
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ,
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ,
4. Ջինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____ էջ,
5. Այլ փաստաթղթեր_____ էջ:

Առդիր՝ _____ էջ:

_____
(ստորագրություն, անունը, ազգանունը)

_____
(դիմումը ներկայացնելու ամսաթիվը)

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: